



## ՆՈՒՊԱՐ ՄԱԳՍՈՒՏՅԱՆ

# ԵՐԴՈՒՄԸ ՈՒ ԱՆՈՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅՈՑ ՄԵԶ



Ն. Մագսուտյան

Ծրբումը ծանոթ սովորություն մեն է հնագույն դարերեն ի վեր Անոր սկզբնավորությունը հեթանոսական առաջին շրջաններուն մեջ կարելի է որոնել: Քրիստոնեությունը շանաց սահմանափակել զամա: Օտարներեն՝ Հովհաննես Պոկեբերան, իսկ հայերեն՝ Հովհան Մանդակունին, շատ հակառակ կճառեն երդումի դեմ: Մանդակունին դրեց ամբողջ ճառ մը պատասն շար սովորության երգման վերնագործ:

Երդումը կրնանք բաժանել երկու մասերու.

Սովորական երգումը, որ ուամիկ դասակարգին կողմէ կկիրարկվեր առօրյա խոսակցության մեջ ու պաշտօնական երդումը, որ տեղի կունենար կարևոր դիպվածներու մեջ, ամենայն լրջությամբ ու միշտ հրապարակավ Այս երկու ձևերը իրարմէ կզանազանին ու հարկ է ինձ անշատաբար գրել անոնց մասին:

Սովորական երդումը կրնանք անվանել անկանոն երդումը իսկ պաշտոնական երդումը՝ «Օրինական երդում»:

Անկանոն երգումը հինեն ի վեր սովորություն դարձած էր հայոց մոտ, որոնք շատ ուսուալ սուր կամ հոպամ եղուածներ կոնենի Մանդակունի կուտա սատանայական եր-

իրարու միջև: Մանդակունին կալանդի, որ խոսքին առաջ երդումը կվազեր ամենուն բերնեն, իսկ ացոփողիք և աղտեղաբանք», կավելացնե Մանդակունին, իրենց ըսկիքը դեռ չխորհած՝ երդումը պատրաստ ունեին իրենց լեզվին ծալրը: (Տես Հ. Մանդակունինին «Ճառք»-ը, 114):

Սուր երդումը այնքան տարածված էր հայոց մեջ, որ նույնիսկ տղաք իրենց խաղերուն հաջողությունը կամ անհաջողությունը երդումներով կհաստատեին: Կամ վաճառականները իրենց արդարությունը հաստատելու համար հաճախ երդումի կիմեմին, կըս Մանդակունին, (տես իր «Ճառք»-ը 115):

Այս կարգի երդումներն ընդհանրապես կկատարվեին՝ արեգակին, լուսինին և աստղերու անունով, որոնք հայոց հեթանոսական շրջանին գլխավոր աստվածներն էին, ինչպես նաև, երդումները կըլլային գումակի և չչքի վրա: Եռերեմն երդումներ կըլլային նաև Աստուծոյ ու Քրիստոսի վրա, կամ Քրիստոսի խաչին, կամ անոր շարլաքանաց վրա, կամ մարգարեններու, առաքալներու ու մարտիրոսներու վրա, որոնց դեմ արտնջալով

դում», ու «կատարյալ ուրացություն» անունները: (Տես իր «Ճապար»-ը 111 ու 115):

Այս հոսք սովորությունը շաբունակվեցավ մինչև ժԲ դարը, երբ ժամանակակից Մխիթար Գուրը՝ երկարորեն կգրել իր «Թատաստանագիրք»-ին մեջ, զանգատեղով, որ երգումը, կմտներ սովորական խոսակցության մեջ, երի խոկ բառերով՝ «Ո փողոց և ի ճրապարակս և ի բանակուռեթիւնս»: Մխիթար Գուշը կրացատրե, որ զատախազները ատանին առջև չելած փողոցներով կամ ձամբաներուն վրա սանկալի երգու: Ճներ կընեին, բայց երբ դատավորի առջև նցեին, կատարյալ սուրբեր կդառնային ու կդժվարանային ընել օրինական երգում, զոր իբր թի կնկատեին ավետարանի հակառակ արարք մը: (Տես «Թատաստանագիրք» էջ 48):

Մխիթար Գոշը իբր երգումի ձևեր, կառնե հետեւալ սովորությունները, որոնք ուամիկներու կողմէ կործադրվեին, երբ մանավանդ այլագինները վիրենք պարտադրեին: —

- ա) եկեղեցի մտնելով ճրագը մարել.
  - բ) բերանով փշել չուրին ու ձիթին վրա.
  - շ) գետինը խաչ նկարել ու վրան կոխել.
  - դ) շան պոչեն բռնել.
  - ե) ձեռքերու մեջ ոսկոր բռնել.
  - զ) գետի վրա երկու ծիր գծել ու մեկին մյուս անցնել:
- Այս բոլոր ձևերուն իմաստը կրնանք հետեւալ կերպով բացարդի: —
- ա) մարել քրիստոնեական հավատքը.
  - բ) մկրտության շորին ու մեռնին շնորհը մերձել.
  - շ) կոխել գրկադրության խորհուրդը.
  - դ) անհավատ շան մը հավասարիլ.
  - ե) մեռնել ու ոսկոր դատանալ.
  - զ) ծիր փոխելով կրոնափոխ ու ուրացող լինել:

Այս բոլոր ձևերուն դիմ զգուշություն կբարողեր Մխիթար Գոշ (Տես «Թատաստանագիրք» էջ 51):

Օդինական երդումները

Օրինական երդումը հայոց մեջ ծանոթ է ու կենացան գրողներու շրջանին, որոնք ուղարկու անունը կրուալին անոր:

Մանդակունին ու Շնորհալին իրենց գրություններուն մեջ մասամբ ներդաշխ կերելին օրինական երդումին: Շնորհալին իր «Ընդհանրական»-ին մեջ կրու: — «Մի՛ եղից ի ձեզ յօժարութեամբ դիմել երդումս... առանց մեծագոյն հարկի», (Տես «Թուղթը ընդհանրական», էջ 192):

Մխիթար Գոշ կընդունի օրինական երդումը, պայմանավ, որ գատավորը հրամայի վայն (Տես «Թատաստանագիրք», էջ 46):

Զաքարիա եպիսկոպոս Մործոնեցին միշտ կարգարացնե զատաստանական երդումը, զոր համաձայն ալ կտոնե Սբ. գրոց հոգիին: Իր «Թուղթ»-ին մեջ որոշապես կըս «Զի ուրիշ է երդումն ատել անձամբ վասն միոյ փողոյ և սուտ, և ուրիշ է երդումն տալ առաջնորդաց և զատաւորաց՝ վասն ճշմարտութեան հաւատալոյր»:

Գրիգոր Տաթևացին ևս երգումը կիուլատրե, բայց միայն անհատներուն առջև երդումի ձևերը հայոց մեջ այլևալ դարերու ընթացքին տարբեր տարբեր կներկայանան ու Հարկ է մի թի ծանրանալ այս հարցին վրա: Հին հայոց մեջ օրինական երդումները կրնային տեղի ունենալ, երբ ծանր խնդիրներ կներկայանային, այլապես միշտ հակասություն կար երդումին զեմ: Մանր ու կարեւոր խնդիրներ կամ պարագաներ կհամարվեին հետեւալները.

Ա. Կենցարալին խնդիրները. այսինքն, երբ առևտրական ու կալվածական խնդիրներ կային և կամ հարստահարումի ու զեղծումի խնդիրներ պիտի քննվեն: Երդումը հոսու ընդունելի էր, բայց ըստ Մխիթար Գոշին ու Մործոնեցիին այն ատեն միայն, երբ վկա չէր գտնվեր:

Բ. Քենական հանցանեները. այսինքն զուղություն, շնորհյում, սպանություն ու ավազակություն ու նման հանցանները իմաստելու համար եղած երդումը: Վերոհիշյալ հանցանները ծանր պատիճներով կփոխարինվեն:

Գ. Կրոնի հանդեպ հավատարմուրյուն. այսինքն, անձի մը հավատքը ապացուցանելու համար և կամ եկեղեցվոր պարագանության համար Այսակի պարագա մը ստեղծված էր Միհրներսին: Առ հայոց գրած նամակին առիթով, երբ կրոնափոխական առտօնությունը շատագոված կամ պարտադրված էր Ակարայրի զյուցազնամարտի նախօրյակներուն:

Հատ Եղիշեի հայերը լնդարձակ թուղթով մը պատվական պատասխան մը տմին պատսից ու ամբողջությամբ կաթողիկոս, եպիսկոպոսներ, նախարարներ և այլն օւնասությունամար եղին վկայութիւն նենօք և մահու ի նմին կալ հաստատունք: Ու երբ հայ նախարարները ստիհամեցան ապասից դուռը երթալ, անոնք կընեն երդումներ որին հատա մնալու ինենց համատեսին մոտ: Նույն տաթով էր, ու եռում մը ևս ևս տեսներ ունենած էր, երբ Վարոպան Մամիկոնյան և ուիստաահնախարականները պատամբութան դուռը տառութ էին ատասից դեմ: Անոնք պատսինական երդումներ պիտի գիրար համոզած էին.

թե Հանապագործն պիտի կովեին պատվս դաշտը:

Դ. Նիփակակցություն. այսինքն, թե՛ օտարներու և թե՛ հայոց նիփակակցության Համար եղած պաշտոնական երդումը: Համար եղած պաշտոնական երդումը: Հայոց պատմության մնջ այս տեսակ երկու պարզաբներ ունինք:

1) մեր Արշակ Բ. թագավորը ստիպված էր նիփակակցության երդում տալ պարսիկ Շապուհին, ու 2) Վարդան ու իր ընկերները 451-ին հոնաց հետ զիրակցում էին երկուստեր տրված երդումներով:

Ե. Հաջոտություն. այսինքն պատերազմի մը վեր երկու աղքարը կամ երկու պատերազմով կողմերը պաշտոնական երդումով զիրար կապահովեին ստեղծվելիք խաղաղության համար: Ասոր բազում օրինակներ կան հայոց պատմության մեջ, ու կրնամ երկու դեպք երևան հանել.

1. Թագավատունյաց հարստության շրջանին, Աշոտ թագավորին օրով, Արա սպառապետը ձերբակալած էր վրաց Ատրներսկէ իշխանը, որը խօստացավ արձակել, եթե անոր փոխարեն վրացին ժարդում տար: Այս երդումը տրվեցավ, բայց դժբախտարար հայոց թագավորը երդունադրութ եղավ:

2. Աշոտ Արքունին իր հորաքեռորդի Հասանը գերի ամենով իր փրկանք առավանոր Սևանա մեջ գտնված ամրոցը, ու պաշտոնական երդումով մը ապահովեց զինքը բնավ շվենասի:

Զ. Հայտակություն. այսինքն, ճորտերը իշխաններուն կուտային հայտակության երդումը, ու զիրենք կապահովեին միշտ հլու մնալ:

Ստորև կուտամ օրինակներ հայոց պատմութենքն:

1. Հայոց Պապ թագավորին ժամանակ Մուշեղ Մամիկոնյան սպարապետը թագավորին պահանջին վրա ստիպվեցավ հավատարմության երդում տալ թե՛ կաթողիկոսին ու թե՛ թագավորին՝ Զյուրավի ճակատամարտին մեջ:

2. Դափիկ Բ. թագավորին օրերուն Վեստ Սարգս ու հայ իշխանները թագավորը երդումով համոզեցին Կոստանդնուպոլիս մեկնելու:

Երբ Պետրոս Գետադարձ կաթողիկոսն հայ իշխաններու մեջ բարկանալով Անին մեկնած ու Վասպուրական առանձնացած էր, Հովհաննես Սմբատ թագավորը ու բոլոր հայ իշխանները երդմանագիր մը զրկեցին կաթողիկոսին, «ինին ունկնդիր ամենայն հրամանաց նորա»: Կրսի Մատթեոս Ուռհայցին:

### Է. Արքայական օծումը

Այս արքարողությունը ազգային ու քաղաքական ամենաշքեղ առիթն էր պաշտոնական երդումին համար: Այսպիսի երդում մը ազգով պարտավոր էր տալ թագավորին:

Սյումիսի պարագա մը կավանին մեջ կիրակոս Գանձակեցին իր «Պատմության» մեջ, երբ Կնկարապետ Պետրոս Գետադարձ կաթողիկոսին ու հայ իշխաններուն տված երդումը Գագիկ Բ. թագավորին օծման օրը:

Պետք է գիտնանք, սակայն, թե Ռուբրինյան թագավորության շրջանին թագավորը պարտավոր էր երդում տալ ազգին ու ոչ ազգը՝ թագավորին:

Վերոհիշյալ յոթը զիմավոր պարագաները ծանրակշիռ խնդիրներ կամացարվեին ու զանոնք երդումներով գործադրելը պարտավորի էին հին հայոց մտու:

Երդումները կրնային տեղի ունենալ նաև տարբեր կրոնին պատկանողներուն միշտն, երբ յուրաքանչյուր կողմ իրավունք ուներ իր սեփական օրինքներուն հետեւուու իսկ եռու երկու կողմերը բրիստոնյա էին, հետեւալ պայմանները անոր էին նկատի ունենալ ըստ Մխիթար Գոշի:

1. Երդում տալու համար հարկ էր 25 տորեկաններ վար ըլլայի:

2. Սերեբր ու հիփանդները պետք չեին երդում տալ:

3. Ապաշխարուղները չեին կրնար երդում տալ:

4. Հավատարիմ կիններն ընդհանրապետ երդում չեր պահանջվեր:

5. Անպարկեցտ ու պառակ և կամ ծնելու մտու եղող կինները չեին կրնար երդում տալ:

6. Մաքսավորները, արքեցոնները ու մեռագործները, արքեցոնները ու մեռագործները չեին կրնար երդում տալ, որքան ժամանակ ու այդպես կմնալին:

7. Երդումն կրնային տալ որոր մերձավոր ազգականները ու բարեկամները:

Հովհաննես Մանդակունիի շրջանին երդում ընկերու իրավունքը շարախոսին կապականներ, իսկ Մխիթար Գոշի շրջանին՝ այս կանոնը փոխված էր:

Երդումը նախապես կատարեին ընդհանրապետ եկեղեցին մեջ, բայց հետո դատաստանական երդումը կրնար տարբեր մալուրու մեջ ալ տրվի, ինչպես ուր հարկը կամ պետքը կրպահանջեր:

Երդումը կրնար արքունիքին մեջ ալ տրվի, ինչպես ուր Հայոց Արշակ թագավորը տված էր Պարսից Շապուհ թագավորին:

Երդումը կրնար պատերազմի դաշտին մեջ ալ տրվի, ինչպես ուր Մուշեղ Մամիկոնյան

սպարապետը տված էր կաթողիկոսին ու Պապ թագավորին նպաստ լեռան վրա:

Երդումը կրնար նաև ճամբաներու մեջ ալ տրվի, ինչպես որ Վարդանանք իրարա տված էր, երբ Պարսկաստանն կվերադառնային ու ամեն ոք իր տեղը պիտի վերադառնար:

Երդումը կրնար տան մեջ կամ սպարանիք մեջ ալ տրվի, ինչպես որ դավաճան Վասակ Մարզպանը տված էր Հայ ուխտապահ նախարարներու ու սեփական ապարանիքն մեջ ըստ պատմիշն (Եղիշեին):

Միիթար Գոչ կարգել է թեթև պարագաներու մեջ տրված երդումը, զոր օրինակ՝ տառ տարեկան տպու մը համար երդում տալլ արգիլված էր: Ու նթե այսպիսի պարագա մը ստեղծվեր դատարանին մեջ, առանց պահանջնու փոքր տղայց երդումը, կրնային դատը շարունակել: («Դատաստանագիրը» էջ 53):

Երդումները ընդհանրապես տեղի կունի նային հետևյալ սրբություններու անունով: — ա. Կաթողիկոսին կամ թագավորին աջին վրա.

բ. Ավետարանին վրա.

գ. Մասնավոր ուխտի կամ երդման ալիտարանի վրա.

դ. Ավետարանին զորության վրա.

ե. Խաչին վրա.

զ. Ավետարանին ու խաչին վրա.

է. Աստուծո անվան վրա.

ը. Եկեղեցվան անվան վրա.

թ. Անիին Հայութ ու միշ եկեղեցիներուն վրա:

ժ. Պատարագի բաժակին (սկիհ) վրա:

Կրնայի յուրաքանչյուրին վրա օրինակներ բերել պատմութենեն, իթե նպատակ ունենայի նյութը իր լման սահմաններովը պարզել, բայց առ այժմ ավելորդ համարեմ:

Երդումը ուներ իր արարողական որոշ ձևերը: Կրոնի հավատարմության համար եղած երդումները ունեին իրենց հարմար աղոթքները, որոնք երդումն առաջ պետք էին ըստիլ:

Երդումի պահուն, սրբություններուն մասնակն խաչին ու Ավետարանին առջե երկրպագություն տեղի կունենար, որմէ վերջ զանոն համբուրեին:

Հազար Փարավեցին կավանդի, թե երբ վարդան Մամիկոնյան ու մըու նախարարները պաշտպանական երդում պիտի տալին նախ Ավետարանը համբուրեցին: Խսկ Փարապության իր պատմության մեջ կավանդէ, որ Մուշեղ Մամիկոնյան

Պապ թագավորին աշը համբուրեկն առաջ երկրպագած էր անոր առջեն:

Խսկ երդումը ընկերու համար եկեղեցի մըունելու պահուն անոր օծյալ որմերը կհամբուրեին:

Նույնը տեղը ունեցած էր Արծորույաց Տիկին Մարիամին կողմէ, որ Սուրբ Կարապետ սրբավալը մանելով «Համբուրեցի զորմ տաճարին» կրսի Հով: Մանդակունին:

Սրբությունները համբուրելին վերջ, ձեռքերը հանգչեցնելին անոնց վրա ու կարտասնելին երգման բանաձեւը:

Ձեռքերու հպում տեղի չէր կրնար ունենալ, եթե Աստծո վրա և կամ Անիին Շապար ու մի եկեղեցիներուու վրա երդում տեղի ունենար: Այս պարագաներուն, սակայն, սովոր էին ձեռքերն դեպի երկինք վերցնել ու այսես երդում ընկը:

Հուս կարի բացադրել երդումներու քանի մը անաձնելիք Անոնցմբ պիտի հիշեմ աշխարհիկ կրոնական ու ատենական ձևերը:

Աշխարհիկ երդման ամենահին ձևն է Մուշեղ Մամիկոնյանին Պապ թագավորին առջե արտասանած հետևյալ բառերը:

«Ենցից և մեռայց ի վերայ քո՞ որպէս նախնիքն իմ ի վերայ նախնեացն քաջ, որպէս

Հալրն իմ ի վերայ Զօրն քո Արշակյա, ալապէս

և ես ի վերայ քո, բայց միայն շարախոսացն ունկն մի՛ գնիցեսա:

(Տես Փալտոս Բյուզանդ Յ. Գ.): Կրոնական երդման քանի մը բանաձևի կան, որոնցմբ միայն պիտի հիշեմ Վահանյանց գործածած բանաձևը բանաձևը ստ Ղ. Փարպեցիին:

«Որ խոստովանեսցի զհաւասոս զայս, զոր Փրկիչն ամեննեցուն և տէր Ցիսոս Թիսոս Փրիստոս վարպակտեալ գրեաց ի սամ, և որդի մարդոյ խոստովանեալ դարձցի գնա առաջի Հօր իւրոյ, ժառանգեցուցանել նմա զերկնից բարութիւնս: Եւ որ ոք կատարեալ ուրացից ի հաւատոյս յաւամնէ, և նենգեալ ստիցէ Աւետարանիս երդման, և որդի մարդոյ ուրացեալ զնա ի խասար արտաքին որ լալ աշացն է և կրճել ատամանց»:

Ատենական երդման ձևերը երկու մասերու կրամանվին: ա) «Ախոսովանության» ու բ) «Ուրացության»:

ա) «Ախոսովանության» երդումին առիթով ընդհանրապես հետևյալ հասարակական բառերը կարտասանեին:

«Փիտէ Աստուած, և խաչ ս Աւտորան վիկայ է սրտիս, զի ալնպէս է

որպէս ասեմ և ոչ ստեմ»:  
Կամ՝

«Փառք սոցա. և զօրութիւն զի  
ձշմարիտ ասեմ զոր ասեմ, և ոչ ստեմ»  
(Մահթար Գոշ, «Դատաստանագիրք», էջ 54),  
բ) «Ուրացության» առիթով երրում ընողը  
իր վկայած դեպքին կամ խոսքին ստուգու-  
թյան համար պայման կցուցներ հակառակ  
պարագային քրիստոնյա չհամարվելու:

Անձավակի օրինակ մը.

«Քրիստոնեա ո՞չ եմ, իիէ չիցէ այդ այդ-  
պէս» (Տես «Դատաստանագիրք» էջ 54):

Երրումները միշտ այսպիս բերանացի չէին  
տրվեր: Շատ ծանրակշիռ դեպքերու առիթի  
բերուկ արտասանվածը գրավոր ալ կտրվեր,  
որպեսզի, ան մնար անուրանալի վկայու-  
թյուն մը: Այսպիսի գրավոր երրումները  
կկոչվին «գիր» կամ «լետկար երդման»:  
«Գիր երդման» բավածը լարով մը կկապեին  
Ավետարանին հետ ու այսպիս կուտային,  
եթե խնդիրը շատ լուրջ էր:

Այսպիս ըրած էր Սյունյաց Վասակ իշխա-  
նը ըստ ծղիչին, երբ իր այս դորդով փա-  
փառցավ նախարարներուն առջև երդում  
տալ, թե հայ պիտի շարունակիր օգնելու-  
հայկական շահերուն, նմանապիս Աշոտ  
երկար թագավորը ու իր աները գրավոր եր-  
դում ըրին (ըստ Հովհաննես կաթողիկոսին):

Գրավոր երդում տված էր նույնպիս  
Սմբատ Ապարագեաց ի նպաստ Ատրներսե-  
հին: Նույնը ըրած էր Աշոտ Արծրունին Հա-  
սան հայ իշխանը արձակելու համար: Նույ-  
նը պատահած էր հեղարքունյաց Վասակ  
իշխանին ու Աշոտ թագավորին միշտ դրված  
երդումն առիթով: Խոկ երբ Գագիկ թ. Անի  
մայրաքաղաքն պիտի բաժանվեր, հայ իշ-  
խանները սերդան գիրը տված էին, կըս Մ.  
Ուռչայիցին:

Երդումները գրվել վերջ պաշտոնապիս  
կկնքիին, ինչպիս ըրած էր Վասակ մարզ-  
պանը ըստ ծղիչին, ու ըրած էին Վարդա-  
նանք ըստ Փարագեցիին, որ կըս, թե կնքված  
էր «Նախարարաց մատանեօք»:

Այս գրված երդումները, որոնք տրված  
էին Աբասին կողմէ Ատրներսեհին ու Աշո-  
տին կողմէ Սահակին, «Կնքված երդման  
յետկարներ» էին, կըս Հովհաննես կաթո-  
ղիկուու:

Անգիր երդումները ընդհանրապիս կկընք-  
վեին Ավետարանին ըրա, այսինքն մատրա-  
նին լուսանցքներուն վրա դրոշմները կշա-  
րեին իրարաւու մոտ: Այսպիս կնքված Ավե-  
տարանը վկա կմնար պաշտոնական, բայց  
անգիր երդման:

Պաշտոնական երդումներու ընթացքին

միջնորդներ կըլային կաթողիկոսը կամ ե-  
պիսկոպոսները ու երեցները, անշուշտ ոչ  
ամենքը միասին, այլ խնդրույն կարևորու-  
թյան համաձայն յուրաքանչյուր աստիճա-  
նավոր կրնար միշամտել:

Ու այս ձևով Մուշնդ Պապ թագավորին  
տված երդումին մեջ իբր միջնորդ ուներ Մեծն  
ներսես Կաթողիկոսը: Վարդանանշ Հազկեր-  
տի արքունիքը մեկնելի առաջ երդում ըրին  
Հովհանի կաթողիկոսին առջև: Արա պապա-  
րակետին ու Ատրներսեհ իշխանին միշտ  
տեղի ունեցած երդումին միջնորդն էր Գե-  
վորք Կաթողիկոսը, որ նույնպիս միջնորդն  
էր Աշոտ Արծրունիին ու Հասան իշխանին  
միշտ տրված պաշտոնական երդումին:

Նույնպիս Անիին իշխանները Գագիկ ար-  
քային երդմանպիր տված էին Պետրոս Գետա-  
դարձ Կաթողիկոսին միջնորդությամբ:

Եպիսկոպոսներու ու երեցներու կողմն  
կիրարկված միջնորդության բազում օրի-  
նակներ ալ կան:

Այսպիսի կարևոր պաշտոնները հին հա-  
յերը եկեղեցականներուն կվատահեին հետե-  
լայ պատճառներով:

ԺԲ դարեն առաջ Հայաստանի մեջ գո-  
յություն չուներ քաղաքական ատենական  
կազմակերպություն մը, ոչ ալ հատուկ օրի-  
նակիք, ինչպիս դոյություն ուներ Բյուզան-  
դիոնին մեջ: Ասոր փոխարեն գոյություն  
ունեին միայն եկեղեցական կանոններ, ո-  
րոնց մեջ բովանդակված էին նաև դատաս-  
տանական շատ մը ինդիններ, որոնց վրա  
հենվելով Մսիթար Գոշ պատրաստած էր իր  
արժեքավոր գործը: Հայոց մեջ օրինագիրքե-  
ռու պակասը արդումն էր աշխարհական  
ատյաններու ու դատավորներու լգոյու-  
թյան: Հայաստանի մեջ այս պաշտոնը մինչև  
միշին դար հանձնված էր եկեղեցական ու  
կրոնական ատյաններուն, որով դատաստա-  
նական իրավունքը կմնար հայ կերպին սե-  
փական իրավունք մը: Մսիթար Գոշի օրով  
այս իրավունքը դարձալ կիրարկվեր հայ  
կերպականությամ երեք գլուխըր աստիճա-  
նավորներուն կողմէ (Կաթողիկոս, եպիսկո-  
պոս և երեց), որոնց հետ աշխարհանուններ  
ալ կրազմեին: Ատրնանին մեջ եպիսկոպոսը  
առաջին դատավորն էր, իսկ կաթողիկոսը  
գոյու էր ամենայն դատավորաց: Պետր է  
գիտենալ, թե հայ կերպականները ընդհան-  
րապիս գիտությամբ ալ բարձր էին հին  
ատեն:

Այս է գլւավոր պատճառը, որ կաթողի-  
կոսը երբեմն հայ թագավորին ալ բարձր  
գերիշխանություն մը ուներ մեր ազգին մեջ,

որմե հաճախ կակնածեին նախարարները ու նույնիսկ թագավորները:

Արևուտքին անծանոթ էր կրոնապետի այսպիսի բարձր ու համազգային հանգամանքը:

Հայոց թագավորները նույնիսկ արտոնությամբ միայն կրօնային ներկայանալ կաթողիկոսին պատասր, իսկ կաթողիկոսը առանց հրամանի ու փափագած ժամանակը խրոստարար կմտներ արքունի պալատը ու առանց արտոնության կրօնային արքային առջև Թագավորը կաթողիկոսին առջև կըրնար պազմիլ այս վերջույն հրամանովը միայն:

Միայն թե պատժական գործերը, որ անպատճ հեմամարթեին եկեղեցականներուն համար, կաթողիկոսին հրամանավ կհանձնվեր յուրաքանչյուր գալառի աշխարհական իշխաններուն (Տես Հ. Վ. Հայունիի «Երդումն հին հայոց մէջ» էջ 81):

Կաթողիկոսին բարձր հանգամանքը կրնամ պարզել մեկ երկու օրինակներով: Երբ Հզոր Աշոտ Արծրունին զրժած էր Հովհաննես կաթողիկոսին (պատժաբան) տված մեկ խոստումը Հասան իշխանը ազատ արձակելուն մեջ, կաթողիկոսը պաշտոնապես բանադրեց արքան ու քովնել բաշացավ անգամ մալ երես շտեննելով պայմանով:

Նույն կաթողիկոսին օրով, երբ Աշոտ Երկաթ Բագրատունի թագավորը Վասակ իշխանին համար տված իր մեկ երդումը դրժելով զինքը կալանավորած էր Կայան ամրոցին մեջ, իսկույն կատղած առյօտի մը նման թագավորին առջև տնկվեցավ Մեծն Հովհաննես պատժաբան կաթողիկոսը ու ըստ իր իսկ բառերուն «սասատկագոյն բան յանդիմանութեան ի վերայ ածեալ թագաւորին պաշարեցի զնա կշտամբութեամբ մեծաւ վասելոյ ուստիշն երդման» (Պատմ. Ծ. Թ.):

Ու Աշոտ եղիկաթ թագավորը մոմի մը պես կակնեցավ կաթողիկոսին առջև (Հ. Վ. Հայունի «Երդումն հին հայոց մէջ», էջ 95):

Սուտ երդումներու հանդեպ հին հայերը շատ խիստ էին: Հին Հռոմեական օրենքով մասամբ կպատժվեին սուտ երդում ընողները: Հաճախապատումին մեջ սուտ երդում ընողներուն մասին կկարդանք հետեւյալ տողերը:

«Զորո բանտիւք և երկաթի կապանօք և պէսպէս տանշանօք խոյտանգեն և մահ ի վերայ ածեն: Ուրեմն հինգերորդ դարեն իվեր հայոց մեջ սուտ երդումները ծանր հանցանքեր կնկատվեին:

Երդմնազանցությունն ալ թեպետ և պժա-

լի կնկատվեր հայոց մեջ, բայց քաղաքական պատճառներով այս թերությունը որոշ ժամանակի մը համար բավական ծավալած էր հայոց մեջ, զոր կրնանք հետեւյալ կերպով ըցացատրել:

Երբ Հայաստան իր քաղաքական ամկախությունը կորցնելով Արշակունյաց գահին անկումով ենթարկվեցավ օտար պետքրուն ու մանավանդ ոչ քրիստոնյա բռնապետներուն, երկու տիրապետող կողմերին որ մեկը որ նպաստավոր քաղաքականություն կվարեր հայոց նպակումամբ, հայերը անոր հետ կկապել նիշակակցական կապերով, որոնց ընթացքին երդումները անպակաս կըլլային:

Այսպիսի երդումներուն հաճախական խզումները պատճառ կըլլային երդմնադրումներու բազմանալուն, ու այս ախտը ավելի արարացի սստիկանները տարածեցին հայոց մեջ Ալս սստիկանները սուտ երդումով միայն կրնային նվաճել հայ իշխանները, որմե վերջ հաճախ երդմնադրություն կըլլային կալանավորելով կամ սպանելով մեր պատվական հայ նախարարները ու անոնց սերունդը: Այսպիսի պարագաներու մեջ հայերն ալ իրենց կարգին երդմնադրություններային երբեմն՝ Բայց պետք է դիտենալ, թե այս պիտանի միջոց մըն էր իրենց պատուածական համար:

Սպակայն ասոր դեմ կրորբոքի ներսս Ծնորհալին, իր «Ընդհանրական»-ին մէջ, երբ կրսե— «Մի՞ որ մեղյէ զանթովի յանցանս ուրանալով զերդումս և երդմնազանց լինելով: Ու մեզ կպատվիր ոչ միայն ուփտապահ ըլլալ առ հավատակիցս, «այլ և առ պայմանակիցն» (Տես «Քուությ ընդհանրական» 192—194):

Ծանր պարագաներու մեջ երդմնադրութները մեծ պատճեներով կհալածվեին ու կրնամ օրինակ մը տալ հայոց պատմութեննեն:

Երբ Վարդանանք Պարսկաստաննեն վերապանակն վերջ գիշեր մը հանկարծ հայ եպիկոպոսները պահտարան ի ձեռին մտան մեծ սպարապետ Վարդանին բնակարանը ու պահանջեցին, որ առաջըք առներ Վասակին ու մողերու ի գործ դրած անկարգություններուն, Մամիկոնյան առյուծը ու ներկա մյուս իշխանները ոգերպած Ավետարանի սիրով, կրկին ու կրկին ուխտեցին պաշտպանն հանդիսանալու: Հայաստանյաց եկեղեցին ու արքիլելու Պարսկական լոժդժությունները: Հնա գտնվող նախարարներն մին, որ Զանդավան կկոչվեր (ու որ նախապես իրենց ուխտակից էր), հանկարծ ընդ-

զգնով ինքինքը երդմնազանց ցույց տվալի:  
Այս ուժատարությունը հսկույժ տեղվուն վրա  
քարկոծվելով սպանվեցավ (Զանդավանին  
անունը մեզ կավանդի Փարափեցին, իսկ դեպ-  
քը կպատճե Եղիշեն):

Բարեմիտ Մարդիկ երբեմն չերմ կրոնա-  
սիրութենե, մղված անխորհուրդ երդումներ  
կընեին, որոնց պահպանությունը շատ ան-  
դամներ անկարելի կըլլար. Այսպիսիները  
«երդմնախար» կըսկեին, որոնց գեմ խիստ  
էր Զաք. Սործորեցին: Բայց հայ եկեղեցին,  
որ միշտ գիրություն ցույց կուտա մարդկա-  
յին տկարությանց հանդիպ, երդմնախար-  
ներուն ներողամիտ կըլլար համախ, որոնց  
փրկության համար գրված էր Մաշտոցին  
Հետեւալ կանոնը, զոր հայ քահանան եր-  
դմնաշարին կկարդար.

Աևստուած, որ զմարդու բնութիւնս  
փոփոխական և տկար զիրքս և զառ ի  
մտածութիւնէ մերձէ խորհուրդս ճշմար-  
տապէս ճանաշս զառ ի խարէու-  
թեանց մերոց եղեալս, որ անխոխակալդ  
ես, արժմանալրեա՝ թողութիւն, որը  
յանդգնեցան յերդումն շաղախիլ, վասն  
զի դու միայն գիտես զգաղտնիս սրտից  
մերոց: Խնդրեմք ի քէն թողութիւնս սոցա-  
և մեզ գտանել քո անճառելի բարերա-  
րութեամբդ: Քանզի աւրհնեալ է անուն  
քոյ և փառաւորեալ թագաւորութիւն  
Հաւը և Որդու և Տոգուդ սրոյ այժմ և  
միշտ և յափտեանս ամէնս»:

Այս մաղթանքին վերջ հայ հավատացյալը  
իր երդումն ազատված կհամարվեր:

Կրոնաբույրու ու մաքուր կենցաղի այսպիսի  
խիստ օրենքները ոչ միայն հայոց մոտ,  
այլ նաև օտարակերու քով նշամրված է:

Հրեաները երդմնապահության մեջ հայոց  
շափ խիստ էին, նրա երդում պիտի տային,  
անոնք սովորություն ունեին որթ մը երկու  
մասերու բաժանել ու անոնց մեջն անցնել: Այս սպանեալիքը ցույց մըն էր համանման  
մահան անոր, որ երդմնադրուժ կլիներ  
(Երեմիա Դ. 18):

Ասորիները և պարսիկները հեռու էին հա-  
յոց և Հրեից կրոնական այսպիսի խիստ  
խղճառութենեն: Սելեվկյաններու օրով եր-  
նիկոսիա (Կիպրոս)

դըմնադրուժության շատ օրինակներ կան  
պատմության մեջ, իսկ Պարսից քով եր-  
դում դրժելը շատ սովորական արարք մըն  
էր:

Հին հելլեներն ալ շատ չէին զանազանմիտ  
ասորիներեն ու պարսիկներեն: Ասոնք ամելի  
տեսականորեն կճանշնային հավատարու-  
թյունը քան գործնականապես: Աղամեմնոն  
անգամ կամացատեր տրովազացիներու՝ ա-  
քայլեցիներու գեմ ցույց տված երդմնազան-  
ցությունները ու կըսէր, մի Արամազդ վրեժ  
պիտի լուծեր իրենցմէ: («Ծիլական» Դ.  
157—168):

Հույն կիներու տված երդումները «զուրիին  
վրայ գրված» կհամարվեին, բայց ամենա-  
երդմնադրուժներն էին սպարտացիները:

Այս պատճառով հույն իմաստասերներն  
ասութածներուն հասած անարդանքներուն  
առաջը առնելու համար աննշան վկաներու,  
այսինքն բուկսերու և անասուններու վրա  
երդումներ հնարեցին:

Այսպիս՝ Զենոն երդում ըրած էր բույսի  
մը վերա, Սոկրատ երդում ըրած էր շան  
մը ու ստիին վերա, իսկ Աթենացի կա-  
խարդ Լամպոնը երդում ըրած էր սագի մը  
վերա»\*)

Հոսուայլեցիք, սակայն, հայոց ու հրեա-  
ներու նման հավատարիմ էին տրված եր-  
դումներուն հանդեպ: Կիկերոն կըսէր, թէ  
երդումը ոչ թէ աստվածներու բարկության,  
այլ արդարության ու վստահության կվերա-  
բերի: Կիկերոնն առաջ հումայեցիք այն հա-  
մոզումը ունեին, թէ աստվածները վրեժ-  
նոնդիր էին երդմնադրուժներուն դիմ, ու  
կվարձատիրներն երդմնապահները:

Հնադարյան հայ պատվական ազգը իր  
դասական անցյալով, կրոնաբույր կենցա-  
ղով ու արժեքավոր պատմությամբ կրնա  
մըցել Արևմուտքի և Արևելքի շատ մը ըն-  
տրըված ազգերու հետ: Եթե մանրամասնո-  
րեն ու գիտականորեն զբաղնք և ուսումնա-  
սիրենք հայոց պատմությունը, միշտ պիտի  
հանդիպնեալ հայ անցյալին այն փառակլր  
ու եղակի վսեմություններուն, որոնց կա-  
րուց կզգանք այսօր աներիբայրուն:

Պետք է գիտենալ, սակայն, որ Հայա-  
տանյաց եկեղեցին հայկական փառակլր  
անցյալն մեզի փոխանցված եղակի զան-  
ձերն մեկն է:

\*) See „Daremburg et Saglio Diction des Antiquités Grecs et Romains“  
էջ 769 և 169—170